

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԲԸՀԱՇՁԲ-14/13

ք. Երևան

01.12.2014 թ.

ՀՀ բաղաբաշխության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվով նախատեսված ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշիվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և 2014 թ. նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին կատարվող աշխատանքների համար կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.06.2015 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը ներառյալ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, *իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:*

4.6 Պայմանագրի կողմերի՝ երբորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառու:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառու պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 491138585 (Չորս հարյուր ինսուսունեկ միլիոն հարյուր երեսունութե հազար հինգ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, որից 81856431 (Ութսունեկ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր երեսունեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Կապալառուի կողմից՝ ՈՒ Հավելվածով նախատեսված նախագծա-նախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 98135400 (Ինսուսունութե միլիոն հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից 16355901 (Տասնվեց միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր մեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.2 Պայմանագրային գումարից 98135400 (Ինսուսունութե միլիոն հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, կանխավճարի սպասելու և ներկայացնելուց հետո:

Սույն պայմանագրի շրջանակներում փոխանցված կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը՝ սլայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հսկընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձևերի փոփոխության, առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է

Պ ա տ վ ի թ ա տ ու

ՔԼ <<ՔՕԻԳ>> ՊՀ

ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011087211, ՀՎՀՀ 02553861

Կ ա տ ա թ ո ղ

<<Բաղրամյանշին>> ԲԲԸ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնազոգ,

<<Հայրիզնեսրանկ >> ՓԲԸ,

Հ/Հ 115004673956,

ՀՎՀՀ 04600132

Տնօրեն



Հ. Սարգսյան



Տնօրեն



Գ. Վարդանյան


Կ.Տ.


ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՅԻՎ
**«Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման
աշխատանքների կատարման
/2014 թ. ֆինանսական միջոցների շրջանակներում/»**


Ձ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումը	Ընդհանուր արժեքը Հազ.դրամ	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբ	Ավարտ
	III մասնաշենքի շինարարական աշխատանքներ			
1	Քանդման աշխատանքներ, հիմքեր	6412.77	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	20.05.2015թ.
2	Հիմքեր, Պատերի ուժեղացում, Շրջանակի կառուցում, Ծածկի սալերի ուժեղացում 3,28 և 6,58 միշերում	33429.79	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
3	Տանիք	3218.97	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
4	Միջնորմներ, Բացվածքների իրականացում	4697.26	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
5	Ղոմեր, պատուհաններ, վիտրաժներ	12952.13	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
6	Աստիճանավանդակ, հատակներ, ներքին հարդարման աշխատանքներ, թեքահարթակ	14088.85	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
7	Արտաքին հարդարում, Վերին սարքավորում հենաշարժային խախտումներ ունեցող երեխաների համար	10169.48	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	15.06.2015թ.
8	Ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգ	2851.63	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
9	Էլ. լուսավորություն, էլ.ուժային սարքավորումներ	4503.18	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
10	Ջեռուցման և օդափոխության համակարգ	4883.70	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
11	Հակահրդեհային ազդանշանում և ներքին տեսահսկողություն	927.66	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.
	Ընդամենը	98135.4	Պայմ.ուժի մեջ մտնելու օրը	30.06.2015թ.


Պ ա տ վ ի թ ա տ ու
ՔՆ «ԲՄԻԳ» ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011087211, ՀՎՀՀ 02553861

Կ ա տ ա թ ո ղ
«Բաղրամյանշին» ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ,
«Հայրիզնեսրանկ >> ՓԲԸ,
Հ/Հ 115004673956,
ՀՎՀՀ 04600132

Տնօրեն  Տարգման



Տնօրեն  Բաղրամյան



Հավելված թիվ 3
 01.12.2014 թ. կնքված աշխատանքների կատարման
 N AC2ԱՇԶԲ-14/13 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ*
 (բաժին 09 խումբ 06, դաս 01, ծրագիր 07)
 /2014 թ. Նախատեսված աշխատանքներ համար/

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան վերակառուցման աշխատանքներ»	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	98135400	98135400

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պ ա տ վ ի ռ ա տ ու
ՔՆ «ԲՇԻԳ» ՊՀ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՀ 900011087211, ՀՎՀՀ 02553861

Կ ա տ ա ր ո ղ
«Բաղրամյանշին» ԲԲԸ
 ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնազոգ,
 «Հայրիզնետրանկ >> ՓԲԸ,
 Հ/Հ 115004673956,
 ՀՎՀՀ 04600132

Տնօրեն



Հ. Մարգարյան

Տնօրեն



Գ. Կարդանյան

«Քաղաքամյակն» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով մրակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը:

1. ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ինֆարմի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման «ԲՆՔՄԻԳ-ԲԸՀԱԸԸԲ-14/13» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին՝ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը:

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման N ԲԸՀԱԸԸԲ-14/13 գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ 49113859 (Քառասունինը միլիոն հարյուր տասներեք հազար ութ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Հայրիզնեբանկ» ՓԲԸ կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Քաղաքամյակն» ԲԲԸ-ն հանձնարարում է «Հայրիզնեբանկ» ՓԲԸ-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ինֆարմի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցնպատ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև աշխատանքների լրիվ ավարտման օրվան հաջորդ օրվանից հաշված 400-երոր /Չորսհարյուրերորդ/ օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությունն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Քաղաքամյակն» ԲԲԸ, ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ,
«Հայրիզնեբանկ» ՓԲԸ, Հ/Հ 115004673956, ՀՎՀՀ 04600132

Տնօրեն

(Ստորագրություն)

Գ. Վարդանյան

գլխ. հաշվապահ՝

(Ստորագրություն)

Գ. Անկասյան





N 7608-02

«28» 11 2014թ

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02553861) և «ԲԱՂՂՐԱՄՅԱԼՇԻՆ» ԲԲԸ-ի (իրավաբանական հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Լեռնագոգ, ՀՎՀՀ՝ 04600132) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև սույն թվականին կնքվելիք «ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. ՎերՖեյի անվան դպրոցի վերակառուցման» (նշել աշխատանքի բնույթը) N "ԲԸԱՇՁԲ-14/9" պետական գնման պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 98,135,400 (իննսուներե միլիոն մեկ հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի տրամադրման պահից և գործում է մինչև 30.09.2015թ.-ը:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:



12. Բնենհիցիարն իրավունք ունի հրաժարվել սույն երաշխիքից թյուղ իր իրավունքներից ինչպես անբողոքությամբ, այնպես էլ մասամբ: Մասամբ հրաժարվելու դեպքում սույն երաշխիքի գումարը նվազում է Բնենհիցիարի կողմից հրաժարված գումարի չափով:

13. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

14. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով:



Անդրուշյան Նախագահ՝

Ա. Մխչայեցյան

Գլխավոր Կաշվապահ՝

Ն. Մարգսյան



Ծավալաթերթ /ընդհանուրը/
ՀՀ Արմավիրի գ.Մուսալեռի Ֆր.Վերձեյի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների
II և III մասնաշենքերի շինարարական աշխատանքներ

հազար դրամ

Հ/հ	Գնացուցակների NN	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Ընդհանուր արժեքը միավորի համար	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
		<i>Քանդման աշխատանքներ</i>				
1	46-122	Առկա պատուհանների զգուշությամբ ապամոնտաժում շեպերի և պատուհանագոգերի	մ ²	47.5	2.00	95.08
2	46-124	Առկա դռների զգուշությամբ ապամոնտաժում շեպերի քանդումով, վերադարձվող	մ ²	44.89	1.00	44.89
3	7-47	Առկա Պ-1 պատուհանի պատուհանագոգի ապամոնտաժում b=0,3մ L=2,0մ - 12 իստ	մ ² պ/գոգ	7.20	0.30	2.16
4	46-122	Տնօրենի սենյակի պատուհանի զգուշությամբ ապամոնտաժում շեպերի և պատուհանագոգերի քանդումով, հետագա	մ ²	1.71	2.00	3.42
5	46-80	Հաստ պատերի մեջ իրականացնել բացվածք	մ ³	4.6	15.00	69.00
6	46-80	500մմ հաստության պատի ապամոնտաժում	մ ³	11.6	15.00	174.00
7	46-80	Պատուհանների տակ քանդել	մ ³	6.75	15.00	101.25
8	46-80	Խարամաբետոնե բլոկներից միջնորմային պատերի քանդում δ=200մմ	մ ³	1.5	8.40	12.60
9	46-88	Խարամաբետոնե սալիկներից միջնորմային պատերի քանդում δ=100մմ	մ ²	217.0	1.00	217.00
10	46-102	Հանդիսությունների դահլիճի բեմահարթակի փայտե կոնստրուկցիաների ապամոնտաժում, աստիճանների հետ միասին -վերադարձվող	մ ²	33.0	0.50	16.50
11	46-103	Գրադարանի մանրահատակի կտրում, միջնապատ կառուցելու համար	մ ²	0.6	0.50	0.30
12	46-99	Ե առ.-ի վրա 2,3 և 9,10 առ.-ի միջև բետոնե հարթակը և աստիճանները ապամոնտաժել	մ ³	6.0	15.00	90.00
13	46-99	Գլխավոր մուտքի դիմացի բետոնե հարթակը ապամոնտաժել	մ ³	23.0	15.00	345.00
14	27-36	Գլխավոր մուտքի բազալտե հատիկավոր աստիճանների ապամոնտաժում-վերադարձվող	մ	17.1	1.00	17.10
15	46-99	Միջանցքների դիմացի բետոնե եզրաքարերը ապամոնտաժել	մ ³	2.35	15.00	35.25
16	1-995	Միջանցքների դիմացի կանաչապատ տարածքի հողի քանդում և տեղափոխում	մ ³	22.0	1.50	33.00
17	46-82	Գլխավոր մուտքի ե/բետոնե բարձակային բեք ծածկը ապամոնտաժել	մ ³	6.30	25.00	157.50
18	7-19	Մարզադահլիճի պատուհանների ճոպանային ցանցերի ապամոնտաժում	մ ²	36.00	0.30	10.80
19	7-19	Պատուհանների մետաղական ճաղաչարի ապամոնտաժում	մ ²	9.20	0.30	2.76
20	27-36	Բետոնե եզրաքարի քանդում	մ	5.1	1.00	5.10
21	46-99	Բետոնե սալվածքի քանդում	մ ³	1.2	15.00	18.00
22	46-94	Կախովի պլաստիկե առաստաղի ապամոնտաժում	մ ²	7.3	0.50	3.65

23	11-80	Առաստաղի մաքրում գաջի քսահարթումից	մ ²	835.0	0.50	417.50
24	11-225	Պատերի մաքրում առկա գաջի սվաղից	մ ²	1140.0	0.50	570.00
25	13-5	Հախճասալի քանդում	մ ²	21.0	0.50	10.50
26	46-103	Մանրահատակի քանդում	մ ²	54.4	0.50	27.20
27	46-119 46-120	Խճանկար հատակի քանդում 3սմ հաստության	մ ²	131.0	0.50	65.50
28	46-109	Տրավերտինե սալիկների 3սմ հաստ. ապամոնտաժում	մ ²	83.3	0.50	41.66
29	46-102	Փայտե հատակի և տարրերի ապամոնտաժում	մ ²	179.9	0.50	89.93
30	46-109	Կեռամիլական սալիկների ապամոնտաժում	մ ²	7.3	0.50	3.65
31	46-109	Սամլոգրամիտե սալիկների ապամոնտաժում	մ ²	97.6	0.50	48.78
32	23-171	Լինօլեումի ապամոնտաժում	մ ²	19.05	0.20	3.81
33	46-119 46-120	Ցեմենտավազային հարթեցմող շերտի քանդում 2սմ հաստության	մ ²	392.6	0.50	196.31
34	46-99	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ ³	23.6	15.00	353.34
35	46-99	Բետոնե նախաշերտի քանդում վնասված տեղերում (10սմ հաստության - 30% չափով)	մ ³	11.8	15.00	176.67
36	46-102	Բեմի քանդում	մ ²	37.5	0.50	18.75
37	10-71 K=0.8	Տանիքի պատուհանների ապամոնտաժում (վերադարձվող)	հատ	5	6.00	30.00
38	46-96	Տանիքի տրամատավոր ցինկապատ փթեղի ապամոնտաժում	մ ²	683.0	0.50	341.50
39	46-96	Տանիքի հարթ ցինկապատ փթեղի ապամոնտաժում	մ ²	123.0	0.50	61.50
40	10-70 q=0,8	Տանիքի փայտե կոնստրուկցիաների ապամոնտաժում - 20% օգտագործել նոր տանիքի կառուցման ժամանակ	մ ³	20.0	25.00	500.00
41	1-1593 գն.3	Շին.աղբի բարձում և տեղափոխում 3 կմ հեռ.վրա	մ ³	185.0	3.00	555.00
Հողային աշխատանքներ						0.00
1	1-961	III կարգի գրունտների քանդում ձեռքով, կողալիցքով	մ ³	190.0	2.00	380.00
2	1-996	III կարգի գրունտների քանդում տեղափոխելով շենքից դուրս	մ ³	100.0	3.00	300.00
3	1-968	Գրունտների ետ լիցք.տոփանումով	մ ³	190.0	1.00	190.00
4	1-1592 գն.3	Ավելցուկային գրունտների բարձում և տեղափոխում 3կմ հեռ.վրա	մ ³	100.0	3.00	300.00
Հիմքեր						0.00
1	6-21	Հիմքերի կառուցում խամբարաբետոնով՝ բետոն B12,5 դասի, խամբար 200 մակնիշի, շրջանակների պարզունակների տակ	մ ³	56.0	45.00	2520.00
2	6-82	Ելուստներ հիմքերից Ф6Ac I L=400 (393հատ)	տ	0.035	500.00	17.50
Շրջանակների կառուցում						0.00
1	23-48	Անցքերի շաղափում Ф14մմ պատի մեջ L=250մմ	100 հատ	2.0	50.00	100.00
2	23-48	Անցքերի շաղափում Ф14մմ պատի մեջ L=500մմ	100 հատ	0.96	50.00	48.00
3	23-48	Անցքերի շաղափում Ф18մմ պատի մեջ L=220մմ	100 հատ	0.16	50.00	8.00
4	23-45	Անցքերի շաղափում Ф10մմ ծածկի մեջ L=50մմ-100մմ	100 հատ	5.04	12.00	60.48
5	23-48	Անցքերի շաղափում Ф24մմ առկա մետաղական հեծանի մեջ L=400մմ	100 հատ	0.04	50.00	2.00
6	26-47 ԻնՖոր.	Միաձույլ ե/բետոնե շրջանակների կանգնակների կառուցում B20 դասի բետոնով	մ ³	31.0	75.00	2325.00
7	ԻնՖոր.	Ամրան Ф8 A cl դասի	տ	1.024	400.00	409.54
8	ԻնՖոր.	Ամրան Ф16,20A 500c դասի	տ	2.569	400.00	1027.76
9	ԻնՖոր.	Ներդիր տարրեր -δ=16	տ	0.141	500.00	70.40

10	26-72 ԻնՖոր.	Միաձույլ ե/բետոնե շրջանակների պարզունակների կառուցում B20 դասի	մ ³	88.52	75.00	6639.00
11	ԻնՖոր.	Ամրան Փ8A cl դասի	տ	3.358	400.00	1343.01
12	ԻնՖոր.	Ամրան Փ16,18,20,25 A 500c դասի	տ	7.478	400.00	2991.20
13	ԻնՖոր.	Ամրան Փ12 A 500c դասի	տ	0.048	400.00	19.20
14	ԻնՖոր.	Ներդիր տարրեր -δ=12,16	տ	0.391	500.00	195.50
15	26-72 ԻնՖոր.	Միաձույլ ե/բետոնե շրջանակների հեծանների Յժմ-1 կառուցում B20 դասի բետոնով՝ ՇՁ-2	մ ³	0.94	75.00	70.50
16	ԻնՖոր.	Ամրան Փ6Ac I դասի	կգ	21.66	0.40	8.66
17	ԻնՖոր.	Ամրան Փ18 A500c դասի	կգ	87.20	0.40	34.88
18	6-173	Միաձույլ ե/բետոնե շրջանակների սալի Սլմ-1 կառուցում B20 դասի բետոնով ՇՁ-2	մ ³	1.16	73.20	84.91
19	ԻնՖոր.	Ամրան Փ6Ac I դասի	կգ	14.52	0.40	5.81
20	ԻնՖոր.	Ամրան Փ8 A500c դասի	կգ	40.92	0.40	16.37
21	26-72 ԻնՖոր.	Միաձույլ ե/բետոնե շրջանակների միջուկի Սժմ-1 կառուցում B20 դասի բետոնով ՇՁ-7	մ ³	0.49	75.00	36.75
22	ԻնՖոր.	Ամրան Փ6A cl դասի	կգ	12.95	0.40	5.18
23	ԻնՖոր.	Ամրան Փ12 A500c դասի	կգ	43.96	0.40	17.58
24	6-168 ինՖոր	Միաձույլ ե/բետոնե շրջանակների հակասեյսմիկ գոտու կառուցում B20 դասի	մ ³	2.28	75.00	171.00
25	ԻնՖոր.	Ամրան Փ6A cl դասի	կգ	22.22	0.40	8.89
26	ԻնՖոր.	Ամրան Փ12 A500c դասի	կգ	99.0	0.40	39.60
27	8-163 ինՖոր	Պատերի կառուցում կանոնավոր տուֆ քարերով	մ ³	6.5	20.00	130.00
28	8-59	Պատերի ամրանավորում մետաղական գանգերով Փ6A cl դասի	տ	0.013	500.00	6.50
29	6-161	Միաձույլ ե/բետոնե հեծանների կառուցում B20 դասի բետոնով	մ ³	19.85	75.00	1488.38
30	ԻնՖոր.	Ամրան Փ6,8A cl դասի	տ	0.83	400.00	331.43
31	ԻնՖոր.	Ամրան Փ18,20 500c դասի	տ	2.163	400.00	865.02
32	ԻնՖոր.	Ամրան Փ12 A500c դասի	կգ	29.0	0.40	11.59
33	ԻնՖոր.	Ներդիր տարրեր -δ=12,16	տ	0.051	500.00	25.60
34	6-173	Միաձույլ ե/բետոնե սալերի կառուցում B20 դասի բետոնով	մ ³	19.40	73.20	1420.08
35	ԻնՖոր.	Ամրան Փ6A cl դասի	տ	0.47	400.00	187.09
36	ԻնՖոր.	Ամրան Փ8 A500c դասի	տ	1.21	400.00	483.82
Ծածկի սալերի ուժեղացում Ը-Թ,Ե-Չ՝,3-12 առ.-ով						0.00
1	23-45	Անցքերի շաղափում ծածկի սալի մեջ 60x60 L=40մմ	100 հատ	10.83	12.00	129.96
2	23-46	Անցքերի շաղափում Փ12մմ կարանների մեջ	100 հատ	6.52	25.00	163.00
3	46-5	Ծածկի սալերի ուժեղացում մանրախիճ բետոնով B20 դասի (որտեղ ներառված են նաև հետևյալ աշխատանքները. անվտանգության ժամանակավոր հենարանների ամրացումներով, մակերեսի մաքրում և նախապատրաստում ե/բետոնային աշխատանքների համար)	մ ³	42.38	85.00	3602.30
4	ԻնՖոր.	Ցանց Փ6A I դասի ամրանից	տ	2.174	400.00	869.64
5	ԻնՖոր.	Փ10Ac I դասի ամրան	տ	0.46	400.00	182.84
6	10-70 ինՖոր.	Նոր տեղադրվող հենատապաստ (100x150x500) և մակադրակ (40x150x250) հյուսիսային սոճու փայտանյութով ոչ ավել 20% խոնավության	մ ³	0.90	185.00	166.50
7	10-201 ինՖոր.	Ձեղնահարկի փայտյա տարրերի հրապաշտպանություն	մ ³	0.90	12.00	10.80
8	7-767 ինՖոր.	Չեղույսների տեղադրում Փ12 A I L=250	կգ	14.30	1.20	17.16

9	1-960	Հավաքել հանդիսությունների դահլիճի տանիքում փռած 10 սմ հաստության խարամը (հետագա օգտագործման համար)	մ ³	32.6	1.20	39.12
10	1-967	Հավաքած խարամի ետ լիցք	մ ³	32.6	1.00	32.60
11	12-289	Գոլորշամեկուսացում 1-շերտ ուղեբեռից իզոլացումով	մ ²	912.0	2.50	2280.00
12	12-288-1	Տանիքի ջերմամեկուսացում նոր խարամով	մ ³	91.2	8.50	775.20
13	12-288-1	1-5 1-27 առ.ով տանիքի ջերմամեկուսացում նոր խարամով	մ ³	18.0	8.50	152.75
		Տանիք				0.00
1	10-70 ինժոռ.	Տանիքի կառուցում ապամոնտաժված փայտե տարրերով 20մ ³ ×0,2=4մ ³	մ ³	4.0	40.00	160.00
2	10-70 ինժոռ.	Տանիքի փայտե կոնստրուկցիաների կառուցում հյուսիսային սոճու փայտանյութով, ոչ ավել 20% խոնավության	մ ³	26.09	185.00	4826.10
3	7-767 ինժոռ.	Տանիքի մետաղական տարրերի և երկաթակապի տեղադրում	տ	0.246	700.00	171.96
4	12-268 ինժոռ.	Տանիքի ծածկույթ տրամատավոր ցինկապատ քիթեղով d=0.55մմ հաստության (առկա տեսքի)	մ ²	835.0	4.50	3757.50
5	Ինժոռ.	Կավարամածի արժեքը	մ ³	3.873	185.00	716.51
6	10-201 ինժոռ.	Տանիքի փայտյա տարրերի հրապաշտպանություն, պատուհանների հետ միասին	մ ³	33.29	12.00	399.48
7	10-203 ինժոռ.	Կավարամածի փայտյա տարրերի հրապաշտպանություն, մշակված մակերեսին	100մ ² մշակված մակերես	3.098	40.00	123.92
8	12-280	Հոսնոցի և գոգնոցի երեսապատում ցինկապատ հարթ քիթեղով b=1000մմ δ=0,55մմ	մ ²	105.0	4.00	420.00
9	12-280 շուկա	Պիպի երեսապատում ցինկապատ հարթ քիթեղով (b=400մմ) δ=0,55մմ L=124,2մ	մ ²	71.0	4.00	284.00
10	12-280 շուկա	Պատուհանների երեսապատում ցինկապատ հարթ քիթեղով	մ ²	32.0	4.00	128.00
11	12-278	ճուղերի պատրաստում հարթ ցինկապատ քիթեղով b=600մմ d=0,55մմ	գ.մ	126.7	4.00	506.67
12	8-195 վեր.աշխ	Ջրհորդանների տեղադրում Φ120	մ	40.0	4.00	160.00
13	8-196 վեր.աշխ	Ձազարների տեղադրում	հատ	10	4.00	40.00
14	8-196 վեր.աշխ	Ջրհորդանի ծունկերի տեղադրում	հատ	20	2.00	40.00
15	46-99	Շաղափել խոռոչ 80x80x190մմ	մ ³	0.23	18.00	4.14
16	11-11	խոռոչների բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	0.23	85.00	19.55
17	10-71	Տանիքի պատուհանի կառուցում հյուսիսային սոճու փայտանյութով, ոչ ավել 20%	հատ	8	40.00	320.00
18	12-280	Ձնարգելի ցինկապատ հարթ քիթեղ δ=0,55 b=500մմ, L=2000մ - 28 հատ b=500մմ, L=1500մ - 16 հատ	մ ²	40.0	4.00	160.00
19	ինժոռ.	Պտուտակ d=5մմ	հատ	552.0	0.01	5.52
20	շուկա	Ուետինե ներդիր 50x50մմ	հատ	552.0	0.10	55.20
21	46-96	Տանիքի ցինկապատ քիթեղի ապամոնտաժում 6-9,2-Ը առ.-ով	մ ²	36.0	0.50	18.00
22	12-283	Տանիքի մետաղական ճաղաշարերի	գմ	36.0	4.00	144.00
23	15-614	Մետաղական ճաղաշարի յուղամերկում 2 շերտով	մ ²	17.0	1.50	25.50
24	26-66	Պարկակտոր թաթախված թանձր սուրիկով 250x250մմ ճաղաշարի հենակների տակ	մ ²	4.8	1.60	7.60

25	6-257 ընդունելի շուկա	Ցեմենտավազային շաղախով պաշտպանված հերմետիկ մածուկով	100մ	0.29	50.00	14.50
26	10-70 ինժոր.	Տանիքի փայտե կոնստրուկցիաների կառուցում հյուսիսային տոնու փայտանյութով, ոչ ավել 20% խոնավությամբ	մ ³	0.55	185.00	101.75
27	10-201 ինժոր.	Տանիքի փայտյա տարրերի հրապաշտպանություն	մ ³	0.55	12.00	6.60
28	12-268 ինժոր.	Տանիքի տրամատավոր ցիմկապատ թիթեղ d=0.55մմ հաստության (առկա տեսքի)	մ ²	36.0	4.50	162.00
Շինարարական աշխատանքներ						
1	8-140	Խարամաբետոնե բլոկով միջնորմների կառուցում 200 մմ հաստությամբ	մ ³	5.40	28.00	151.20
2	8-169	Խարամաբետոնե սալիկով միջնորմների կառուցում 100 մմ հաստությամբ	մ ²	174.0	4.50	783.00
3	46-119 46-120	Օժանդակ սենյակի հատակը կտրել աստիճան կառուցելու համար	մ ²	3.0	0.50	1.50
4	46-99	Բետոնի քանդում	մ ³	0.2	15.00	2.25
5	1-961	Գրունտի քանդում	մ ³	2.1	2.00	4.20
6	1-1593 զմ.3	Բետոնի բարձում և տեղափոխում 3 կմ հեռ. վրա	մ ³	0.2	3.00	0.60
7	1-1593 զմ.3	Գրունտի բարձում և տեղափոխում 3 կմ հեռ. վրա	մ ³	2.1	3.00	6.30
8	5-40	Առկա 2-2 սենյի մանրահատակի հղկում	մ ²	52.0	0.50	26.00
9	15-608	Նույնի լաքապատում	մ ²	52.0	0.50	26.00
10	8-140	Մարզադահլիճի պատուհանները շարել երկտակ խարամաբետոնե բլոկով 200 մմ	մ ³	1.85	28.00	51.80
11	8-169	Խողանոցի նախկին դռան տեղը շարել խարամաբետոնե սալիկով 100 մմ	մ ²	2.1	4.50	9.45
Միջնորմների ամրակցում						
1	23-45	Անցքերի շաղափում $\Phi 16$ մմ L=100մմ	100 հատ	1.10	12.00	13.20
2	6-82	$\Phi 12$ ԱIII դասի ամրանի տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.273	500.00	136.35
3	6-82	$\Phi 6$ AI դասի ամրանի տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.084	500.00	42.20
